



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 մարտ 2020 թվականի թիվ 110-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐ ԿԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԿԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 25-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝
 - 1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի,
 - 2) Աուդիտորի/Ներքին աուդիտ ծառայություն մատուցող կազմակերպության ծառայության մատուցման գործընթացում ներգրավված աուդիտորների անկախության հայտարարագիրը՝ համաձայն հավելված 2-ի,
 - 3) ներքին աուդիտի ենթակա միավորների ցանկը՝ համաձայն հավելված 3-ի,
 - 4) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը՝ համաձայն հավելված 4-ի,
 - 5) Ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը կազմելու նպատակով պահանջվող ռիսկերի գնահատման տեղեկագիրը՝ համաձայն հավելված 5-ի,
 - 6) ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչները՝ համաձայն հավելված 6-ի,
 - 7) աուդիտի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելված 7-ի,
 - 8) աուդիտորական առաջադրանքի արդյունքների մասին արձանագրությունը՝ համաձայն հավելված 8-ի,
 - 9) գործողությունների ծրագրի ձևաչափը՝ համաձայն հավելված 9-ի,
 - 10) ներքին աուդիտի որակի շարունակական և պարբերական գնահատումների ստուգաթերթը՝ համաձայն հավելված 10-ի,
 - 11) ներքին աուդիտի ծառայության գործունեության տարեկան հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 11-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի մարտի 13-ի «ՀՀ Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 25-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՉՈՐԱՆՅԱՆ

17.03.2020



X